«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական նպատակները
ԱՌԱՐԿԱ	Ես և շրջակա աշխարհը
ՀԵՂԻՆԱԿ	Ռայա Գալուստյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի N9 հ/դ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……2

`

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դաստիարակչական նպատակները……3

Եզրակացություն……18

Օգտագործված գրականություն……19

Ներածություն

Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու իր յուրահատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան, քան նրանց այդ ունակությունները մեր փորձով փոխարինելու փորձը:

Ժան Ժակ Ռուսո

Աշխարհի մասին ամբողջական ու բազմակողմանի պատկերացում ձևավորելու համար կարևոր է ուսուցման գործընթացն այնպես կազմակերպել, որ յուրաքանչյուր սովորող ակտիվ ներգրավված լինի բոլոր աշխատանքներում՝ առաջնորդվելով իր հետաքրքրություններով և ուսումնական հնարավորություններով: Դրան մեծապես նպաստում է «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկաների ինտեգրված ուսուցումը: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման նպատակն է սովորողների մեջ ստեղծել ամբողջական պատկերացում շրջապատող միջավայրի մասին: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակում քննարկվող շատ հարցերի անդրադարձ է կատարվում նաև մյուս առարկաների դասավանդման ժամանակ:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել շրջապատի նկատմամբ ուշադիր լինելու, հետազոտելու, խնամելու, պահպանելու, բարեկարգելու կարողությունները, նպաստել հաղորդակցվելու, համագործակցելու, շրջապատող մարկանց նկատմամբ հարգալից լինելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական նպատակները

Հայաստանում յուրաքանչյուր երեխա պետք է լինի սիրված,սնված և խնամված: Ամեն ինչ պետք է անել բարելավելու համար ամենախոցելի՝աղքատության և մեկուսացման մեջ ապ-րող երեխայի կյանքը: Ծնվելու պահից մինչև ավագ դպրոցի ավարտը,Հայաստանում յուրաքանչյուր երեխա և ընտանիք պետք է կարողանա օգտվել իր համար նախատեսված քաղաքականությունից և ծառայություններից:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար: «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված ուսումնական դասընթացը կոչված է օգնելու երեխային՝ ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ: Այն հուսալի հիմք է միջին և ավագ դպրոցների «Բնագիտություն», «Հասարակագիտություն», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Պատմություն» առարկաների, ինչպես նաև «Առողջ և անվտանգ կենսակերպ» ինտեգրվող բովանդակային ուղղության համար:

Առարկայի բովանդակությունը կառուցվում է «ես» գաղափարի շուրջ՝ հետագայում ընդլայնելով և բացահայտելով անձի և նրանից դուրս գտնվող շրջանակների բազմաշերտ փոխազդեցությունները: «Ով եմ ես», «Ես և մյուսները», «Ես և բնությունը» և «Ես և տիեզերքը» ինտեգրված միավորները կրտսեր դպրոցականներին թույլ են տալիս պատկերացնել իրենց շուրջն եղած աշխարհի ամբողջական և միևնույն ժամանակ բազմաշերտ էությունը՝ փոխադարձ կապվածություններով և փոխկախվածություններով՝ ինքնաճանաչումից մինչև աշխարհաճանաչողություն: Առաջարկվող նախագծում ներառված են այս պահին գործող առարկայական ծրագրերի բովանդակային և թեմատիկ բոլոր բաղադրիչները՝ որոշ լրացումներով:

- Հիմնական բովանդակային նորությունները նախատեսվում են բնագիտական բնագավառի թեմաներում, որոնք հարստացվել են փորձարարական, հետազոտական և գործնական գործունեության ձևերով:Կան որոշ թեթևացումներ աշխարհագրական թեմաներից, որոնք նախորդ ծրագրում գերակշռում էին:
- Հասարակագիտական թեմաներում բովանդակային փոփոխություններ գրեթե չկան. առավել շեշտադրված է ինքնության, ազգային արժանապատվության, համայնքի, հայրենիքի, դրա մշակույթի և բնության պահպանման և պատասխանատվության վերաբերյալ

արժեհամակարգային բաղադրիչը: Առողջ ապրելակերպի վերաբերյալ թեմաներում որոշ շեշտադրումներ կլինեն ծխախոտի վնասակարության, բուլիինգի (հալածանքի) և համաճարակների ժամանակ անհրաժեշտ վարքականոնների վերաբերյալ:

- Չափորոշչում և ծրագրում ներկայացված են և՛ միջառարկայական, և՛ ներառարկայական կապերը՝ ապահովելով ինտեգրված ուսուցումը:

Առարկայի ծրագրով նախատեսված բաժիններում մեծ ուշադրություն է դարձված և ընդգրկուն պարզաբանումներ են տրված թե՛ գործունեության ձևերի նկարագրության, թե՛ խաչվող գաղափարների վերաբերյալ, որպեսզի տարրական դպրոցի ուսուցիչը բնագիտական թեմաներում բավարար աջակցություն ունենա:

Օրինակ 1. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի՝ «Մեր հայրենիքը» թեմայի շրջանակում սովորողները պետք է ճանաչեն Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները (դրոշ, զինանշան, պետական օրհներգ, փող, …), թվարկեն Հայաստանի մեծ քաղաքները, լճերը, գետերը, լեռները, ցույց տան դրանք քարտեզի վրա, ծանոթ լինեն հայ ժողովրդի անցյալի ու ներկայի նշանակալի որոշ իրադարձությունների, գործիչների, հայրենիքի պատմության ու մշակութային հուշարձաններին, իմանան ազգային, պետական տոների մասին, կարողանան բացատրել հայրենիքի նշանակությունն իրենց կյանքում:

Օրինակ 2. «Մայրենի» առարկայի՝ Հայաստանին նվիրված թեմատիկ խմբերում խոսվում է հայոց այբուբենի, հայ գրողների, կոմպոզիտորների, նկարիչների, Հայաստանի տեսարժան վայրերի, հայկական առասպելների և շատ այլ բաների մասին:

Օրինակ 3. Երաժշտության՝ «Իմ ժողովրդի երաժշտությունը» թեմայի շրջանակում սովորողները պետք է իմանան ազգային երաժշտության նմուշներ, ճանաչեն հայ նշանավոր կոմպոզիտորների ստեղծագործությունները, իմանան նրանց կենսագրության հետաքրքիր դրվագները (Կոմիտաս, Արամ Խաչատրյան, Ալեքսանդր Սպենդիարյան և այլն):

Օրինակ 4. Կերպարվեստի ծրագրի համաձայն՝ սովորողները պետք է իմանան Հայաստանում գործող թանգարանների, պատկերասրահների և դրանց գործունեության մասին, ճանաչեն ժողովրդական արվեստի ստեղծագործությունները (ճարտարապետություն, զգեստներ, կենցաղի առարկաներ և այլն), օրինակներ բերեն ժողովրդական վարպետների և դեկորատիվ - կիրառական

արվեստի ներկայացուցիչների ստեղծագործություններից, որոնց կտավներում արտացոլված են հայկական ավանդույթները և այլն:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել շրջապատի նկատմամբ ուշադիր լինելու, հետազոտելու, խնամելու, պահպանելու,բարեկարգելու կարողությունները, նպաստել հաղորդակցվելու, համագործակցելու, շրջապատող մարկանց նկատմամբ հարգալից լինելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր անձ առօրյայում և իր կենսագործունեության ոլորտներում շարունակ առնչվում է ֆինանսական տարբեր, այդ թվում՝ անձնական ֆինանսների կառավարմանը վերաբերող խնդիրների, որոնք կենսական նշանակություն ունեն մարդու համար: Այդ խնդիրներն արդյունավետ լուծելու համար պահանջվում է ունենալ ֆինանսական ունակությունների բավարար մակարդակ, ինչը կարող է ձեռք բերվել միայն նպատակային կրթական ծրագրերի շնորհիվ: Ֆինանսական կրթության այն ծրագրերը, որոնք ողջ կյանքի ընթացքում անձի համար համապիտանի կարողությունների ձևավորման միջոց են, վերաբերում են հանրության բոլոր անդամներին և աստիճանական զարգացում են ունենում որպես շարունակական գործընթաց: Այդ գործընթացի առանցքային և հիմնական օղակներից մեկը հանրակրթական դպրոցն է, որտեղ հնարավոր է անձի զարգացման վաղ տարիքից ներդնել անձնական ֆինանսները կառավարելու սովորույթ, այն դարձնել կենսակերպի անբաժանելի մաս և ձևավորել որպես մշակույթ:

Հանրակրթական ծրագրերի բովանդակության մեջ ֆինանսներին վերաբերող գիտելիքների ներառումը, իր հերթին, խթան կհանդիսանա նաև մեծահասակների (ուսուցիչների, ծնողների և այլն) ֆինանսական ունակությունների բարելավման համար, և արդյունքում բարենպաստ միջավայր կստեղծվի, որպեսզի հանրային կյանքում դրական վերաբերմունք ձևավորվի անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ:

Հանրակրթական դպրոցներում ֆինանսական կրթության իրականացման արդյունավետ ուղիներից մեկը միջառարկայական ինտեգրումն է, երբ ֆինանսներին վերաբերող բովանդակային նյութը ներառվում է գործող առարկաներից մի քանիսի ծրագրերում: Ինտեգրման մոտեցումը թույլ է տալիս, չավելացնելով դասաժամային ծանրաբեռնվածությունը, ֆինանսների կարևորությունը

լուսաբանել ուսումնական տարբեր առարկաներում դիտարկվող իրավիճակների վերլուծության, օրինակների պարզաբանման և խնդիրների լուծման ընթացքում:
Այդ տեսակետից առանձնահատուկ հնարավորություններ ունի «Ես և շրջակա աշխարհը», որը «Բնական գիտություններ» և «Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված առարկա է տարրական դպրոցի 2-4-րդ դասարանների համար, իսկ ֆինանսական կրթության տարրերն անմիջականորեն առնչվում են հասարակական կյանքին, հասարակությանն ու նրա յուրաքանչյուր անդամին: Ուստի, ֆինանսական կրթության տարրերի ինտեգրումը առարկայի բովանդակությանը բարդ չէ, ավելին, այդպիսի ինտեգրումը բարենպաստ կլինի հենց «Ես և շրջակա աշխարհը» առարկայի կրթական խնդիրների իրականացման առումով. ֆինանսներին վերաբերող հարցերի քննարկման շնորհիվ ավելի լավ կապահովվեն առարկայի բովանդակության կապը իրական կյանքի հետ, ուսումնական նյութի ընկալումն ու սովորողների հետաքրքրասիրության բարձրացումը:

Ֆինանսներին վերաբերող որոշ գիտելիքներ, թեև ոչ համակարգված ձևով, ներառված են հանրակրթական որոշ առարկաների բովանդակության մեջ, արտացոլվում են դասագրքերում և ուսումնական գործընթացում:
«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ծրագրով նախատեսված որոշ թեմաների շրջանակում արծարծվում են հասարակական կյանքին առնչվող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ կարիքը, ցանկությունը, նպատակը, զբաղմունքը, աշխատանքը, մասնագիտությունը (3-րդ դասարան), ապրանքափոխանակությունը, փողի առաջացումը, առևտուրը, տնտեսության զարգացումը, իրավունքներն ու պարտականությունները, անվտանգությունը լայն առումով և այլն (4-րդ դասարան), նախատեսվում է, որ սովորողները պետք է ճանաչեն ՀՀ դրամը, հաշվեն և գործածեն այն, տարբեր միջոցառումների համար կազմեն պարզ բյուջե, պլանավորեն իրենց ծախսերը և այլն: Սակայն ֆինանսական կրթման համակարգված բովանդակություն և նպատակաուղղված աշխատանք «Ես և շրջակա աշխարհը» առարկայի գործող չափորոշչով, ծրագրով և դասավանդման մեթոդիկայով չեն նախատեսվում: Ուստի, սովորողներին հնարավորինս վաղ տարիքից իրենց կյանքին անմիջականորեն առնչվող երևույթներին ծանոթացնելը, նրանց կողմից իրականացվող առօրյա գործողությունների (գնումներ, հաշվարկ, խնայողություն, կարիքների և ցանկությունների տարբերակում, առաջնահերթությունների որոշում և այլն) գրագետ

իրականացումը կօգնի նրանց ավելի ապահով ապրել ու սովորել, լիարժեք մասնակցել ընտանիքի ֆինանսական կյանքին վերաբերող հարցերի քննարկմանը, պլանավորել իրենց հետագա անելիքները՝ կրթություն, հանգիստ, անհրաժեշտ ապրանքների ու ծառայությունների ձեռքբերում և այլն:

Անձնական ֆինանսների վերաբերյալ որոշումներ կայացնելու և իրավիճակին համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար անձից պահանջվում է որոշակի ինքնավստահություն, սկզբունքայնություն, համարձակություն, ֆինանսական բանիմացություն, վերլուծելու կարողություն: Այս որակները սովորողների մեջ հնարավոր է զարգացնել նպատակաուղղված, շարունակական, ներգրավող աշխատանքի արդյունքում, որի բովանդակությունը հենց կյանքն է և սովորողներին անմիջականորեն առնչվող հարցերը:
«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասընթացում ֆինանսական կրթության ինտեգրումը կնպաստի ֆինանսապես գրագետ անձի ձևավորմանը, անձ, ով ունի այնպիսի գիտելիքներ, հմտություններ և մշակույթ, որոնք նրան հնարավորություն են տալիս լինել տեղեկացված, իր անձնական ֆինանսների վերաբերյալ կայացնել պատասխանատու որոշումներ, ձեռնարկել իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ: Հետևաբար, ֆինանսական կրթության տարրերի ինտեգրումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությանը միայն լրացնում և ամբողջացնում է այն՝ ենթադրելով նաև առարկայի նպատակի հստակեցում և ամբողջացում՝ սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորում, առողջ ու անվտանգ կենսագործունեություն վարող, իր որոշումների և արարքների համար պատասխանատու անձի դաստիարակում:
7-10 տարեկան հասակում հիմք է դրվում սոցիալական պատկանելիության զգացումի ձևավորման, համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները ճանաչելու համար: Անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամության ձևավորմանն ուղղված հարցերը: Սովորողները վերլուծությունների, տարբեր իրավիճակների քննարկման ճանապարհով պետք է հասկանան, որ միայն այդ որակների առկայության դեպքում կարելի է կառուցել բարեկեցիկ ու արժանապատիվ

ապագա՝ կառավարելով սեփական կյանքին առնչվող բոլոր ոլորտները և պատասխանատվություն կրելով իր անձի, ընտանիքի, համայնքի ու հասարակության զարգացման համար:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում սովորողները գաղափար կկազմեն ֆինանսական մի շարք հասկացությունների և երևույթների մասին, ինչպիսիք են՝ փող, խնայողություն, պարտք, բյուջե, գնումներ, բանկ, բանկային հաշիվ, վճարման քարտ, ապրանքի և ծառայության գին, փոխարժեք, վարկ, գնաճ և այլն:

Ակնկալվում է, որ դասընթացի արդյունքում, ի թիվս առարկայական չափորոշչով նախատեսված գիտելիքների, կարողությունների և արժեքների՝ սովորողները.

- կիմանան՝ երբ, ինչու և ինչպես է առաջացել փողը,
- կգիտակցեն, որ փողն արժեք ունի և այն պետք է ապահով պահվի,
- կկարողանան ապրանքի կամ ծառայության ինքնուրույն ընտրություն և գնում կատարել,
- կգիտակցեն խնայողությունների դերը նպատակներն իրագործելու հարցում,
- կունենան խնայատուփ,
- իրենց խոսքում կկիրառեն ֆինանսական որոշ հասկացություններ,
- կորոշեն առաջնահերթությունները գումար ծախսելիս կամ խնայելիս,
- կընկալեն պարտքը որպես պարտավորություն և կգիտակցեն այն կատարելու անհրաժեշտությունը,
- կիմանան սպառողի իրավունքները և կօգտվեն դրանցից և այլն:

Ֆինանսական կրթության բովանդակային բաղադրիչները հանգամանորեն ներկայացվում են թեմատիկ պլաններում, որոնք նախատեսվում են «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ծրագրում ներառելու նպատակով:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման համար խորհուրդ տրվող ուսումնական գործունեության տեսակներից և մեթոդներից են, օրինակ.

- երևույթների դիտարկում, մեկնաբանում,
- տեղանքի ուսումնասիրում, արդյունքների վերլուծում,
- նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում,

- ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում,
- գործնական և փորձարարական աշխատանքների կատարում,
- գրաֆիկական աշխատանքների կատարում,
- արվեստի ստեղծագործությունների դիտում և վերլուծում,
- կոնֆլիկտային իրավիճակների քննարկում,
- ստեղծագործական աշխատանքների կատարում, ներկայացում,
- աշխատանքների կատարում թվային տեխնոլոգիաների կիրառմամբ,
- մրցույթների, վիկտորինաների, ցերեկույթների կազմակերպում,
- բանավեճերի, քննարկումների, դերային խաղերի կազմակեպում,
- իրավիճակների դիտարկում և վերլուծում,
- հաշվետվությունների պատրաստում, ներկայացում,
- անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

Ֆինանսական կրթման բաղադրիչի ինտեգրումը «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությանն ապահովելու նպատակով ի թիվս գործունեության վերոնշյալ տեսակների՝ կարելի է կիրառել նաև՝

- սոցհարցումների անցկացում և տվյալների վերլուծում,
- դերային խաղերի կազմակերպում և վերլուծում,
- ուսումնական էքսկուրսիաների կազմակերպում,
- նախագծային աշխատանքներ և այլն:

Ֆինանսական կրթությունը պետք է դիտել որպես հասարակական-պետական պատվեր՝ ուղղված հանրակրթությանը, դրա իրականացումը պահանջում է համապատասխան մեթոդիկայի մշակում, ուսումնական ձեռնարկների ստեղծում, ուսումնադիտողական նյութերի ու պարագաների պատրաստում:

Անհատի ձևավորման նպատակասլաց, սիստեմատիկ պրոցես՝ նրա ակտիվ մասնակցությունը հասարակական, արտադրական, կուլտուրական կյանքին նախապատրաստելու համար: Դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի և դպրոցի համատեղ գործունեության ընթացքում, նախադպրոցական և արտադպրոցական

հիմնարկություններում, մանկական ու երիտասարդական կազմակերպություններում: Սերտորեն կապված է ուսուցման հետ: Դաստիարակության հիմնական եղանակներն են՝ ընտանեկան և հասարակական: Դաստիարակությունը հասարակական կյանքի համընդհանուր անհրաժեշտ կատեգորիա է: Բովանդակությունը, մեթոդներն ու ձևերը պատմա -կանորեն պայմանավորված են հասարակարգի առջև ծառացած խնդիրներով և նրա շահերով: Դաստիարակությունը վերնաշենքային երևույթ է: Նրա նպա –տակներն ու խնդիրները որոշվում են հասարակական հարաբերություններով :

Դաստիարակության հարցն այսօր շատ լուրջ է, քանի որ ներկա սերունդն ավելի շատ տեղեկատվություն ունի, շուտ է զարգանում, ուստի հատուկ մոտեցում է պետք :

Մի բան պարզ է, որ երեխային պետք է դաստիարակել մանկուց, այլապես ուշ կլինի: Ինչպես մեր մեծերն էին ասում. «Երեխային բարուրի մեջ պետք է դաստիարակել», այսինքն՝ ծնված օրվանից :

Երեխայի ճիշտ դաստիարակության համար մեծ նշանակություն ունի շրջապատը, սակայն ամեն դեպքում երեխան նախ դաստիարակվում է ընտանիքում, հետո՝ դպրոցում : Ծնողները՝ հայրն ու մայրը պետք է լրջորեն զբաղվեն երեխայի դաստիարակությամբ :

Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց շնորհակալ և հետաքրքիր զբաղմունք է : Եվ նրա նշանակությունը չի կարելի չգնահատել, չի կարելի ինքնահոսի թողնել, կամ ամբողջովին վստահել մանկապարտեզին ու դպրոցին :

Դեռևս նախնադարյան հասարակության մեջ տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայմաններում, քիչ թե շատ հետևողականորեն կազմակերպում էին տվյալ հանրության երեխաների, աճող սերնդի զարգացումն ու ձևավորումը:

Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի վրա, նրանց աշխարհայացքի,արարքների, սովորույթների վրա : Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը :

Շրջապատի մարդիկ այսպես թե այնպես ազդում են մարդու մտքերի և արարքների, նրա աշխարհընկալման և իր վրա՝ անկախ նրանից նա դա ուզում է, թե ոչ : Եվ իհարկե, շատ մեծ է այդ ազդեցությունը երեխաների վրա : Երեխաները սպունգի նման ներծծում են այն ամենը, ինչ կատարվում է նրանց շուրջը :

Նրանք մեծ հաճույքով կրկնում են իրենց շրջապատող մարդկանց և ծնողների խոսքերը, միմիկան, վարքի ձևերը :

Կարևոր է, որ ծնողները գիտակցեն, որ հատկապես իրենցից է կախված, թե ապագայում ինչպիսին կդառնա իրենց երեխան : Կլինի նա երջանիկ և վստահ իր ուժերին, թե կլինի կոմպլեքսներով, չարացած աշխարհի վրա՝ չիմանալով իրեն ինչպես դրսևորի՝ չունենալով որոշակի գիտելիք, հմտություն և պաշար :

Երեխաների դաստիարակության ժամանակ առաջին հերթին հարկավոր է երեխային մոտենալ որպես անհատ : Բայց չի կարելի մոռանալ համընդհանուր արժեքները՝ վարքի կանոնները, բարոյականությունը և կոլեկտիվի և հասարակության վրա ներգործելու բարեկիրթ մեթոդները, որոնք ապագայում կօգնեն լինել ինքնուրույն և կարողանալ գործել որոշակի կերպով :

Երեխայի դաստիարակության գործում կան մի շարք նրբություններ և կանոններ՝

- Հարկավոր է լինել սիրալիր երեխայի հանդեպ: Սերը, գուրգուրանքը փոքրիկին թույլ է տալիս զգալ իրեն պաշտպանված,վստահ իր անձի նկատմամբ:
- Ուսուցչի և ծնողի պահանջը պետք է լինի մշտական, տրամադրության հետ չփոխվի և համապատասխան լինի երեխայի հնարավորությանը: Չի կարելի պահանջել նրանից կատարել իր ուժերից վեր խնդիր : Դա խեղաթյուրում է երեխայի կամքի ձևավորումը, նրա նպատակասլացությունը :
- Հարկավոր է թողնել, որ երեխան ինքնուրույն գնահատի իր արարքը : Նույնիսկ եթե նա սխալ է գործում, պետք չէ նրան կանգնեցնել, թող վերջացնի, հետո նոր բացատրել, թե ինչը ճիշտ չի արել : Դա նպաստում է փորձի ձեռքբերմանը և բարձրացնում է ինքնագնահատականը :

 Երեխայի դաստիարակությունը այնպես պետք է կառուցել, որ նրա մոտ գիտելիքի պահանջ ձևավորվի: Խոսքը ոչ միայն դպրոցական կարգապահության, այլ նաև շրջապատող աշխարհի մասին է: Երեխան պետք
է իմանա, որ նա կարող է ճանաչել աշխարհը, ինչ որ նոր հետաքրքիր բան հայտնաբերել, կարևոր հայտնագործություններ անել : Երեխան պետք է դրանից հաճույք ստանա : Դրանով ձևավորվում է հետաքրքրությունը :

Քանի որ դաստիարակչական մեթոդները հիմնված են մարդկանց տեսակետների վրա, դրանք բազմիցս փոփոխության են ենթարկվել վերջին տասնամյակների ընթացքում : Մանկավարժ Ռոնալդ Մորիշը գրում է.
‹‹Դաստիարակության մեթոդները անընդհատ փոխվում են :Դրանք արտացոլում են հասարակության մտածելակերպի փոփոխությունները›› :

Կրթության դերն աճում է, միաժամանակ կրթությունը վերաճում մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը զարգացնելով համակեցության , հանդուրժողականության, և արժեքային որակներ :

Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ ‹‹Ես և շրջակա աշխարհը›› ուսումնական առարկան ‹‹Բնական գիտություններ›› և ‹‹Հասարակական գիտություններ ›› ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2 – 4 դասարանների համար :

Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, հնարավորություն է ընձեռում բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու

Հանրակրթության չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները :
Բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, Երկիր մոլորակի՝ որպես մարդկության ընդհանուր տան, ուսումնասիրությունը իրականացվում է՝
ա) սովորողի շրջապատում (տուն, բնակավայր, բնական լանդշաֆտ) դիտվող բնության տարրերի և երևույթների դիտարկումների, պարզունակ փորձերի

նկարագրության,

բ) սովորողի կողմից սեփական օրգանիզմը ճանաչելուն, առողջության պահպանմանը և անվտանգ կենսագործունեություն ծավալելուն ուղղված ուսումնական գործունեության տեսակների իրականացման,

գ) իր շրջապատը հետազոտելու տարրական կարողությունների և դրանց վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումների կատարման ապահովման,

դ) Հայաստանի բնության բազմազանության, բնական և հասարակական օբյեկտների ու երևույթների վերաբերյալ տարրական գիտելիքների ձևավորման,

ե) մայրցամաքների հայտնագործման ու հետազոտման պատմությունների միջոցով :

7–10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար:

Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման չորս հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացկամության ձևավորմանն ուղղված հարցերը :

Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը :

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխայի՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը :

(1)Տարրական դպրոցի 2- 4-րդ դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է.

- սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող հասարակական երևույթներին ու օբյեկտներին, մարդկային

հարաբերություններին,

- սովորեցնել ճանաչել սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին,
- սովորեցնել արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, նրանց մոտ ձևավորել իրենց և շրջակա աշխարհը ճանա-

չելու հմտություններ,

- նպաստել սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողակա-

նության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացկամ վերաբերմունքի ձևավորմանը,

- օգնել դառնալու աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ, ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն,
- նպաստել աշակերտների ինքնադրսևորման ու ինքնահաստատման հմտու-

թյունների ձևավորմանը,

- ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ, բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում,
- նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը

լինելու գիտակցմանը :

1.https://escs.am/files/files/2020-07-16/78d42f8e0e54315f27def6183904452f.pdf

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ; Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը : Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազանքներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի

նույնպես արժանի են հարգանքի :

Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա ախարհի հետ ծանոթացման շնորհիվ : Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ:

Տարրական դպրոցում սովորողի գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային և այլ ուսումնական առարկաների:

Այս դասընթացի ընթացքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար:

Թեմատիկան պահպանվում է 2 – 4 դասարաններում և պարույրաձև՝ պարբերաբար կրկնվում: Իհարկե, յուրաքանչյուր տարի ձեռք է բերում նոր մակարդակ և ըստ աշակերտների տարիքային առանձնահատկությունների, խորանում ու բարդանում:

Դասընթացի բոլոր թեմաների ուսումնասիրության ժամանակ դասագիրքը ապահովում է բազմաբնույթ գործնական աշխատանքներ :

Լսում եմ՝ մոռանում եմ,
Տեսնում եմ՝ հիշում եմ,
Անում եմ՝ հասկանում եմ:

Դասընթացն ուսումնասիրելուց հետո աշակերտների մոտ ձևավորվում են հետևյալ հմտությունները:

- Որոշումներ կայացնել
- Խնդիրներ լուծել
- Քննադատաբար մտածել
- Ստեղծագործաբար մտածել
- Հաղորդակցում
- Միջանձնային հմտություններ

- Ինքնաճանաչում
- Ապրումակցում
- Զգացմունքներին տիրապետել
- Սթրեսներին դիմակայել

Շրջապատի հետ արդյունավետ հարաբերվելու անկյունաքարն օբյեկտիվ ինքնարժեքորումն է: Իրենք իրենց հանդեպ դրական դիրքորոշում ունեցող երեխաները առավել դյուրությամբ են դրական ընկալում ուրիշներին: Եթե ուզում ենք, որ երեխաները ընկալունակ լինեն, մարդկանց զանազան խմբերի հանդեպ հարգանքի, հավասարության գիտակցում ունենան, անհրաժեշտ է,որ ձևավորվի նրանց ինքնարժեքորումը: Այս զգացումը նրանց օգնում է նոր ոլորտներ թափանցել՝ հակասական երևույթները քննելու, սովորելու, նոր, անծանոթ տեսակետների ձևավորման խնդրում:

Ցածր ինքնագնահատականը միջանձնային կոնֆլիկտների աղբյուր է համարվում: Հասակակիցների հետ հարաբերվելու դժվարություններ ունեցող ագրեսիվ երեխաները իրականում փորձում եմ այս կերպ փոխհատուցել ցածր ինքնագնահատականը:

Իրենք իրենց, նաև այլոց, արժեքը գնահատող երեխաներն առավել հակված են չհանդուրժելու խտրականությունն ու անհավասարությունը, առավել պատրաստ են պայքարելու անարդարության դրսևորումների դեմ: Բարձր ինքնագնահատականն ուղիղ համեմատական է ճգնաժամի պարագայում պայքարելու պատրաստակամությանը, ի հակադրություն հուսահատվելուն, կամ պասիվորեն ուրիշից լուծում սպասելուն:

Ինքնարժեքորման ձևավորման շրջանում պետք է կարևորել նաև, ուրիշների ուժեղ կողմերը նկատելու և գնահատելու երեխաների կարողությունը:

Դրական ինքնագնահատական ունեցող երեխաներին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- իրենց թե՛ ուժեղ, թե՛ թույլ կողմերը իրատեսորեն գնահատելու ունակություն,
- ուրիշների արժեքը տեսնելու ունակություն,
- առանց պաշտպանվողի դիրք ընդունելու, քննադատությունը և այլ առաջարկներ հանգիստ ընդունելու ունակություն,
- համագործակցելու ունակություն՝ ընդունելով խմբի բոլոր անդամների ներդրումները, առանց փորձելու իր մտքերը մյուսներին պարտադրելու կամ նրանց իշխել,

• կոնֆլիկտային իրավիճակներում տրամաբանված, հավասարակշռված կեցվածք ընդունելու ունակություն՝ առանց խոսքային կամ ֆիզիկական բռնության դիմելու:

Երեխաները բնազդով զգում են կեղծիքը և կարող են կորցնել վստահությունը մեծահասակի հանդեպ,որն անկեղծ չէ իրենց հետ: Դպրոցականների հետաքրքրությունների և ճանաչողական ակտիվության զարգացումը ուսուցման կազմակերպման որևէ ձևում մեծապես պայմանավորված է նյութի բովանդակությունով և հաղորդման ձևով: Հետաքրքիր ու բովանդակալից դասը վարելու դեպքում շահում է թե աշակերտը,թե ուսուցիչը:

Աշխարհի մասին ամբողջական ու բազմակողմանի պատկերացում ձևավորելու համար կարևոր է ուսուցման գործընթացն այնպես կազմակերպել, որ յուրաքանչյուր սովորող ակտիվ ներգրավված լինի բոլոր աշխատանքներում՝ առաջնորդվելով իր հետաքրքրություններով և ուսումնական հնարավորություններով: Դրան մեծապես նպաստում է ուսումնական առարկաների ինտեգրված ուսուցումը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով այն արդյունավետ, կյանքի վրա հիմնված դարձնելու համար:

«Ինտեգրում» հասկացությունը կարող է ընկալվել երկու նշանակությամբ, որպես ուսուցման նպատակ՝ սովորողների մեջ ստեղծել ամբողջական պատկերացում շրջապատող միջավայրի մասին, որպես ուսուցման միջոց՝ գտնել ընդհանրություններ ուսումնական առարկաների բովանդակության միջև:

Ոչ ոք չի կարող դատել ուրիշների մասին,
Քանի դեռ չի սովորել դատել ինքն իր մասին:

Յ. Գյոթե

<<Ես և ծրջակա աշխարհը>> առարկան իր առջև դրված դաստիարակչական նպատակները սկսում է կատարել 2-րդ դասարանից և 4-րդ դասարանում սովորողները ունենում են բավական գիտելիքներ իրենց շրջապատող աշխարհի,Երկիր մոլորակի և տիեզերքի մասին: Սովորողները սիրով են ընդունում առարկան, որը ինտեգրվում է մայրենիի,մաթեմատիկայի,կերպարվեստի,տեխնոլոգիայի հետ:

Սովորողը ճանաչում է իրեն, ընկերներին, իր համայնքը, իր երկիրը՝ նրա խորհրդանիշներով: Ունենում է պատկերացում Երկիր մոլորակի վրա գտնվող օվկիանոսների, ծովերի, մայր ցամաքների,կլիմայի, բնական զոնաների, աշխարհագրական հայտնագործությունների մասին:

Պարզ գործնական աշխատանքների միջոցով նրանք պատկերացում են կազմում կենդանի և անկենդան բնության, բուսականության, հողաշերտերի, պետության կողմից պահպանվող կենդանական և բուսական աշխարհի հազվագյուտ և անհետացող տեսակների մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի թեմաները սովորողի մեջ դաստիարակում են հարգանք դեպի ընկերները, ընտանիքը, դասարանը, դպրոցը: Նա հասկանում է ինչ է հանդուժողականությունը,ավելի ուշադիր է զննում շրջապատում կատարվող փոփոխությունները: Սովորողը առնչվում է ֆինանսական կրթության հմտություններին, սովորում է կիրառել այն ամենը ինչ նրան տրվել է թեմայի հետ կապված ֆինանսական նախագիտելիքների ուսումնասիրության ժամանակ:

Սովորողները նաև դաստիարակվում են՝ ձեռք բերելով առողջությանը վերաբերող նախագիտելիքներով: Նրանք ծանոթանում են մարդու ֆիզիոլոգիական կառուցվածքին, ներքին օրգանների աշխատանքին, նյարդային համակարգին , սննդի յուրացմանը և մեր տեղեկատվական գործակալներին՝ մարդու հինգ զգայարաններին և նրանց խնամքին:

Այս ամենը նպաստում է, որ սովորողները ընկալեն և սիրեն «Ես և շրջակա աշխարհը» առարկան:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Հովսեփյան Ա.: Ես և շրջակա աշխարհը:

2.Հանրակրթական հիմնական դպրոցի <Ես և շրջակա աշխարհը> առարկայի չափորոշիչ և ծրագիր